

1870ին Մանգ. Էփ. (Թ. 1263) կը յիշէ Պալաթի «Գարաց Ընկերութիւնը»:

1778ին Պալաթի Դարաց Դասին Դարաց պետն էր «տիրացու Ռափայէլ», իսկ իր փոխանորդները՝ «ճահախ Դերձակ տիրացու Ռափայէլ» եւ «Մանկավարժ տիրացու Սարգիս»⁹:

Ինչպէս Ալլոյոյանէան¹⁰ կը հաւատայ՝ մինչեւ վերջերս կը պահէր Պալաթի Դարաց Դասը իր գոյութիւնը՝ «վառ պահելով նորահասներուն մէջ եկեղեցիին ծառայելու եռանդը եւ փափաքը»:

2. ԱՐԱՐԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1844)

Դոկտ. Վ. Թորգոմեան¹¹ եւ Ա. Ալլոյոյանէան¹² Պալաթի Արամեան Ընկերութեան հիմնումը 1845ին կը դնեն: Մինչ ժամանակակից հայ թերթը՝ Արշալոյս Արարատեան¹³ 1844 Սեպտեմբեր 2 թուականով կը ծանուցանէ արդէն անոր հիմնումը ըլլալը: Յիշեալ թերթը հոգ ըսելէ յետոյ թէ Գուգափուի մէջ «Լուսաւորչեան Ընկերութիւնը» հիմնուած է՝ կը գրէ. «Կը լսեմք թէ Պալատու դպրատան յառաջադիմութեանը համար պատանկ մէկ Ընկերութիւն մը հաստատուեր է Սրբազան Պատրիարքին ազգասիրական խնամքովը, որուն վրայօք հարկաւոր տեղեկութիւններ դեռ չստացանք որ ծանուցանենք բարեսէր հասարակութեանը:

Զմիւռնոյ հայ թերթը տեղեկութիւն ստանալէ վերջ (1845ին) Պոլսոյ 9ը Ընկերութիւններու կարգին — Գուգափուի «Լուսաւորչեան»ի քովը — կը յիշէ նաեւ Պալաթի «Արամեան Ընկերութիւնը» (Արշ. Արարատեան, 1845, Թ. 235):

Հետեւաբար Պալաթի Արամեան Ընկերութիւնը ոչ թէ 1845ին՝ այլ 1844ի Սեպտեմբերէն առջ հիմնուած է:

Արամեան Ընկերութեան նպատակն է Պալաթի «Նորէնեան» վարժարանի նպատակը:

Ալլոյոյանէանի համեմատ¹⁴ Ընկերութիւնը 1847ին կը կազմաւորուի եւ «Նորչեան» անունով կը վերակազմուի: Այս մասին հին վկայութեան մը չենք հանդիպած: Ընդհակառակն Ընկերութիւնը ողջ է, իր

⁹ Անդ, էջ 113:
¹⁰ Գաղ. Տարեգր., Ա., էջ 52:
¹¹ Երեմիա Զէլէպիի Մասմուրայ Պատմ., Ա., Վիեննա 1913, էջ 323:
¹² Անդ, էջ 54:
¹³ Զմիւռնիա, 1844, Թ. 206:
¹⁴ Անդ:

ակզբնական անունով, տակաւին 1871ին (տե՛ս Օրագիր, 1871, Թ. 459):

3. ԽՈՐԷՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1846—1847)

Պալաթի մէջ «Նորչեան» անունով վարժարան մը արդէն 1816ին հիմնուած էր¹⁵: Այդ վարժարանին անունով վարժարանի պաշտպան Խորէնեան Ընկերութիւն մը եւս կը հիմնուի անցեալ դարու 40ական թուականներուն, սակայն ժամանակակից հայ թերթերէն ոչ մէկուն քով հանդիպած ենք Ընկերութեան հիմնումի պարագաներուն ու թուականի մասին: Այդ Ընկերութեան առաջին յիշատակութիւնը 1857 Յունուար 10ին Մասիս կ'ընէ, ըսելով թէ «ասկէց տասն տարիի չափ առաջ» կազմուած է: Հետեւաբար կարելի չէ վճռականօրէն ըսել թէ 1846ին թէ 1847ին հիմնուած է ան: Ալլոյոյանէանի յօդուածին մէջ¹⁶ 1846 թուականը նշանակուած է իրրեւ հիմնումի թուական, իսկ Սկսնակ Բանասէր¹⁷, Հրանդ Ասատուր¹⁸ եւ Թորգոմեան¹⁹ 1847 թուականը կ'ընդունին:

1856ին Նորչեան Ընկերութիւնը կը վերակազմուի Պալաթի հայ երեւելիներէն Պետրոս Խորասանեանի նախաձեռնութեամբ ու նպատաներով: Այս ամէնուն մասին կարելոր է Մասիսի վերոյիշեալ տեղիքը, զոր կուտանք ամբողջութեամբ:

Հայ թերթը կը գրէ. «Մայրաքաղաքիս Պալատու թաղին հայ ժողովուրդը՝ ասկէց տասն տարիի չափ առաջ Ընկերութիւն մը կազմելով, յանուն սրբոյն Մովսէսի Խորենացոյ՝ իրենց դպրատունը բարեկարգելու ձեռք գարկեր էին. բայց մէկ կողմանէ նոյն թաղին մէջ ձեռնհաս անձանց նուազութիւնը եւ միւս կողմանէ ժողովրդեան մեծագոյն մասին մէջ ուսման սէրը բաւական տարածված չըլլալը՝ դպրոցը հիմնաւոր եւ տեւական բարեկարգութեան վիճակի մը մէջ դնելու համար եղած ջանքերուն յաջողութեանը դժուարութիւն կու տային: Այս ապարդիւն եւ անհաստատ վիճակին վերջ մը տարու համար, ասկէց ութ ամիս առաջ, նոյն թաղին երեւելիները՝ Խորասանեան մեծապատիւ Պետրոս ամիրային քաջայերական յորինուածական դաստիարական առատաձեռն նպատուքը վերոյիշեալ

¹⁵ Ընդարձակ Օրացոյց, Կ. Պ. 1901, էջ 184:
¹⁶ Գաղ. Տարեգր., Ա., էջ 57:
¹⁷ Արեւիկ, 1898, Թ. 3854:
¹⁸ Ընդ. Օրաց., անդ, էջ 232:
¹⁹ Երեմ. Զէլէպ., անդ, էջ 323:

Խորենեան Ընկերութիւնը նորոգեցին եւ դպրոցը ի հիմանց բարեկարգեցին²⁰»:

Դպրոցի շէնքին հիմնական նորոգութեան համար Ընկերութիւնը վիճակահանութիւն մը կ'ընէ²¹:

1858ին Ընկերութեան նախագահն է Պետրոս Խորասանեան Ամիրա²²:

Ըստ Ալլոյոյանէանի²³ Ընկերութիւնը 1866ին կը յաջողի դպրոցի նոր շէնք մը կառուցանել: 1883ին երրորդ անգամ կը վերակազմուի Ընկերութիւնը²⁴: 1893 Ապրիլ 11ին չորրորդ անգամ կը վերակազմուի՝ քառասպատիկ նպատակով. 1. Դարման հիւանդաց, 2. Նպաստ աղքատներու, 3. Խորենեան վարժարանի աղքատ ուսանողներու գրեական պիտոյքի եւ 4. Մատենադարան²⁵:

Զատ է Պալաթի «Նորչեան Ապագային» Ընկերութիւնը, որուն վրայ յետոյ:

(Շարունակելի): 2. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

Բ. ԹԱՇՃԵԱՆ (ԳԱՐԵՆՅ), Արշակունի Հայաստանի Խաղարամեայ փառքը: Գահիրէ 1950, 80, էջ 560:

Հայոց պատմութեան նախաքրիտոնէական 522—539 տարիներուն նուիրուած է աշխատութիւնս: Ամէնէն կնճոտ չըջանը Հայոց պատմութեան: Յոյն եւ լատին գրականութեան մէջ պահուած սակաւթիւ եւ աղօտ տեղիքները, արձանագրական եւ գրամագրական աղքատ տուեալներն եւ ազգային անվստահելի աւանդութիւնները ազրելը պիտի ծառայեն պատմագէտին լուսաւորելու նորագոյթ ժողովուրդի մը նիստն ու կացը եւ անոր աղբսը անդրենածին ցեղերու եւ դրացի աշխարհակալներու եւ անոնց ենթակայ ժողովուրդներու հետ:

Աշխատութեանս հեղինակը պատմասէր է. ան ուսումնաստենչ ոգով կարգացած է այս շրջանին հայոց հին եւ նոր եւ նորագոյն ուսումնասիրութիւններ, ծաղկաքաղած է անոնցմէ լայն էջեր, տարիներ շարունակ: Ան ժամանակը հասունցած զգացած է այս ստաղծները յորինուածական դաստիարակ

²⁰ Մասիս, 1857, Թ. 250:
²¹ Անդ, Թ. 308:
²² Անդ, Թ. 328:
²³ Գաղ. Տարեգր., Ա., էջ 57:
²⁴ Հմմտ. Թորգոմեան, անդ, էջ 324:
²⁵ Ալլոյոյանէան, անդ:

թեան ենթարկելու եւ կազմելու Հայոց պատմութիւն մը յիշել չըջանի, գինուած, «խիզախ» դաստիարակութեամբ: Առ այս քաջալերած են զինքը ծանօթ պատմասէրներ: Իր նպատակն եղած է տալ հայրենակիցներուն հայրենիքի պատմութիւնը:

Կը գովեմ նպատակը, կը դրուատեմ եռանդը, բայց կը կասկածիմ գործին յաջողութեան վրայ:

Պատմասէրը եթէ չէ ուզած բանասէր հանդիսանալ, բայց պէտք էր յանձն առնել քննասէր ըլլալ եւ եզրակացութիւններու մէջ համեատ քան «խիզախ»: Եթէ հոյը ստեղին տակ հաստատուն չէ, խիզախ ուսումը անպատճառ պիտի ձախողի:

Զեմ ուզեր այստեղ օր եւ է կէտ մանր քննութեան առնել, քանի որ քննական աշխատութիւն մը չէ ներկայացուած մեզի: Բայց չեմ լսեր յիշեցնելու, որ անժամանակ է իրրեւ պատմական ազդերը ձեռք առնել «Մար Արասի պատմութիւնը» լուսարանելու համար պատմական շրջան մը:

Եթէ քննասէր չենք, գահանանք տալ մեր ընթերցողներուն գոնէ նորագոյն ուսումնասիրութիւններու եզրակացութիւնները մեկին սիրութիւններու եզրակացութիւնները մեկին եւ մատչելի: Յանկալի էր, որ հին պատմութիւնը իր անձանտոններով եւ տեղանուններով ներկայացուէր ին տառադարձութեամբ:

Հեղինակը ազնիւ դանուած է իր այս աշխատութիւնը հրապարակ հանել իրրեւ «Զօն Սերաստացի Միտի» արբաժօր իր մասնուն թ. դարադարձին առթիւ»: Որուն համար կը յայտնեմ մեր սրտազին շնորհակալութիւնը:

Հ. Ն. Ա.

ՍԻՍԱԿ Յ. ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ, Հայերը Լիբանանի մէջ: Պէյրուս 1951, մեծ 80, էջ 39 + 500:

Լիբանանի հայ դպրութիւնը եւ աւանդու պատմական յիշատակարաններ եւ աւանդութիւններ ցոյց կու տան, թէ 1700—1900 շրջանին եղած են հոն Հայեր, որոնք կազմած են Միտի Երեւանի Ընկերութիւններ (Անտոնեանց եւ Զմմա-նու վանքին), եւ Հայ բողոքական համայնք (1824էն սկսեալ), կառուցուած են Հայ կաթողիկէ եւ Հայ լուսաւորչական եկեղեցիներ եւ վարժարաններ:

Վարժապետեան զովելի եռանդով եւ անխոնջ պրպտումներով երեւան բերած է ականաւոր անձեր, տուած է անոնց կենսա-

գրութիւնները, լուսանկարները: Երբորդ մասին մէջ ներկայացուցած է 1895—1918 շրջանի գէմքերը այրուեանական կարգով, կենսագրութեամբ եւ նկարներով:

Հնագոյն շրջանի պատմութեան մէջ չէ գտած բացի ենթագրութեանէ՝ հայկական հետք (էջ 3—10):

Թէեւ պատմութիւնը լրած է այս մասին, բայց հայ թարգմանական եւ պատմական գրականութիւնը յիշած է Լիբանանի մայրաքաղաքի Բէյրութի անունը մէկէ աւելի անգամներ, զորոնք այստեղ կ'ուզեմ հաւաքել:

Քաղաքի անունը յոյն եւ լատին գրականութեան մէջ կը յիշուի Βηρυτός, Berytos որ հայ թարգմանական մատենագրութեան մէջ տարադարձուած է Բիւրիտոն եւ Բիւրիտոն ձեւով:

Աշխարհացոյցն (ընծայուած Մ. Խորենացւոյ) ունի. «Ադոնիս (գետ) որ եւ նա երանէ ի Լիբանանէ եւ բաժանէ ընդ մէջ Բիւրոս եւ Բիւրիտոս քաղաքաց, եւ իջանէ ի ծով» (հրտ. Սիւքրեանի, Վենետիկ 1881, էջ 36): Սոկրատ, Եկեղ. Պատմ., էջ 80, «Բիւրիտոն», 371—372 եւ էջ 10, «Բիւրիտացի»: Գր. Սքանչելագործ, Պոնտացի «Բիւրիտոն օրէնս ուսանէր» (372): Այս ինքն Գրիգոր Բիւրիտոսի համալսարանի մէջ «օրէնս» կը սորվէր: Այս քաղաքէն էր Վինդոնիոս Անատոլիոս Բիւրիտացի, որ խմբագրեց Վաստակոց գիրքը (geoponica), այս գրքի արարերէն թարգմանութեանէն թարգմանուած է հայերէնը, ուր կ'ըսուի. «Այս գիրք Պոնիոս Անագալիոսի, որ ի քաղաքէն Պէրութայ. զոր շինեաց... եւ անուանեաց զսա Վաստակոց գիրք» (Վենետիկ 1877, էջ 1): «Բիւրիտ քաղաք». Վարք հարանց, Բ., 157:

Յայտնուորքներու եւ Ոսկեփորիկներու մէջ կը պատմուի Բիւրիտոն քաղաքի մէջ Քրիստոսի խաչելութեան պատկերի սքանչելիքը. հրատարակուած Ս. Աթենասի ճանորդ մէջ (Վենետիկ 1899, էջ 489—492):

972ին հայագրի Յովհաննէս Չմշկիկ կայսր իր առ Աշոտ շահնշահ գրած թուղթին մէջ կը պատմէ, թէ իր բանակով, որոնց մէջ կային հայ զօրքեր, յաղթական նուաճումներով «զնացաք ընդ ծովեզերին պողոտայն, որ դէմ յանգիման երթայր ի Վոլտոն քաղաքն յերեւելին եւ յանուանին պարսպեալ

յոյժ, որ այժմ ասի Պէրութ, պատերազմեալ եւ սաստիկ կռուով առեալ զնա եւ հազար ավերիկեցի ձերբակալս արարաք»: Եւ կը հաւատէ թէ ի Վերիտոն գտած է «գալտիկերն Փրիզին մերոյ, զորս Հրեայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղվազակի էլ արիւն եւ ջուր. եւ զիսոց տիգին... եւ առեալ տանիմք ի պահպանութիւն աստուածապահ քաղաքին մերոյ» (Կ. Պոլիս). Մ. Ուոհայնցի, էջ 24—27: Հմմտ. նաեւ Սմբատ, էջ 36 (շահեցաք... ի Բերիտոն գալտիկերն Քրիստոսի, որ յետ ժամանակաց Հրեայքն խաչեցին, եւ զհերս Յովհաննու Մկրտչի):

1110ին ձօսլին կ'արշաւէ «ի վերայ քաղաքին, որ ասի Պէրութ ի վերայ ովկիանոս ծովուն, որ էր ի ձեռս Տաճկաց. եւ առաւ Պէրութ ի Տաճկաց... եւ առ հասարակ գամենայն քաղաքն սրով կոտորեցին եւ լցան զօրքն Փոնդաց քաղաքեամբ աւարաւ: Եւ ձօսլինն էր ի յանունն քաղաքին Պէրութայ. եւ արար ձօսլին անաւոր քաջութիւն» (Մ. Ուոհայնցի, էջ 312—313):

Հ. Ն. Ա.

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՈՆԻՆԻ. Հայ Մշակոյթի պատմութիւնը, նորօրային շրջանէն մինչեւ ոսկեդար, նորային պատմական ֆինապատուրեան եւ արձանագրական գիտերու հիման վրայ. պատրաստեց —: Պէյրութ 1954, 80, էջ 327:

Ե. Ս. Քասունի, որուն գրական գործունէութեան 50ամեայ յորեխանը տօնուեցաւ 1953ին, սիրող եղած է միշտ տոհմիկ պատմութեան. ունինք իր գրչէն մեծածիւ պատմական աշխատութիւններ, լոյս տեսած զանազան ուսումնաթերթերու եւ շարաթերթերու մէջ, որոնց մէկ մասը հրատարակուած է առանձին հատորներու մէջ, եւ ձեռնարկուած է հրատարակել նաեւ միւս մասերը:

Ներկայ հատորը կ'ամփոփէ այն դասաթուութիւնները, որոնք խօսուած են 1911—1913 տարիներուն եւ ապա ընդլայնուած՝ լոյս տեսած են «Կոչնակ Հայաստանի» եւ «Չարթօնք» թերթերուն մէջ 1931—1939 շրջաններուն Տիշոեան ստորագրութեամբ:

Այժմ վերամշակուած կը ներկայացուի առանձին հատորով աւելի ընդարձակ շրջանի մատչելի ընելու համար:

Հ. Ն. Ա.

Ն Ո Ր Հ Ր Ը Տ Ը Ր Ը Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած Խմբագրութիւնում):

Աբիկեան Յ. Ժիրայր, Անկախ Խոհեր, Թիւ 1: Նիւ Եորք 1934, 80, էջ 16:

Ազատեան Թորոս, Պատմութիւն Կասեան Վարժարանի: (Յիսնամեայ Յիշատակարան. 1895—1945): Ա. Յաւելուած, 1945—1955: Իսթանպուլ 1945, 80, էջ 166 + Բ: Իսթանպուլ 1955, 80, էջ 66:

Այլոմ Քեսապի եւ Շրջակայից: Հրտ. Քեսապի Ուսումնասիրաց Միութեան Պէյրութի Մասնաճիւղի: Պէյրութ 1955, 80, թուղթ 106: Գինն՝ 5 տորար:

Անտեան Հ., Լիբանոսի Քերականութիւն Հայոց Լեզուի Համեմատութեամբ 562 լեզուներու. Ներածութիւն: Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա Լեզուի Ինստիտուտ: Երեւան 1955, 80, էջ 12 + 656: Գինն՝ 21 ու. 50 կ.:

Աշնեան Սարգիս, Կէօթէյէն ի վեր: Քերթուածներու Ծաղկաբաղ: Պէյրութ 1948, 80, էջ 80: Գինն՝ 200 Լ. Դ.:

Աւետարան ըստ Ղուկասու (Անգլիերէն-Հայերէն): Անգլիական ու օստարական Մ. Գրքի Ընկերութիւն: Լոնտոն 1925, 120, էջ 118:

Գալփանեան Կարապետ Ա. Քինյ., Գիրք Ելից Հայոց: Պէյրութ 1955, 80, էջ 651: Գինն՝ 6 տորար:

Գարեկէօղեան Ս. Միութեան Մատենաշար Թիւ 1: Յորեկեան Տիկին Անժէլ Պաղտատեանի. Ուսուցչական յիսնամեայ գործունէութեան: Իսթանպուլ 1955, 80, էջ 48:

[Գարեգին պատրիարք], Անգրանիկ կոնդակ Տ. Գարեգին Ս. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ: Իսթանպուլ 1951, 80, էջ 16:

Գարեգին վարդապետ, Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան: Քահանայական Ձեռնագրութեան Քահանայական ասթիւ: Պէյրութ 1955, 80, էջ 96:

Գեորգեան Կարօ, Ամէնուն Տարեգիրքը: Գ. տարի, 1956: Պէյրութ, [1955], 80, էջ 616: Գինն՝ 1 սթերլին:

Գրացուցակ Մասիս Գրատան: Նիւ Եորք, 160, էջ 42:

Եօթնասուներկամեայ Յորեկեան Տ. Չարմայր Ծ. Վ. Կեղեւեանի Եկեղեցական, գրական եւ հանրային ծառայութեանց: Իսթանպուլ 1955, 80, էջ 16:

Թաղեանեան Արամ (Լեո Կամսար), Ազգային Այրբեանարան: Պէյրութ 1954, 80, էջ 80: Գինն՝ 100 Լ. Դ.:

Թաղեանեան Յովսէփ, Հին Յունաստանի Առասպելները եւ կրօնական հաւատալիքները: Թեհրան 1955, 80, էջ 96: Գինն՝ 30 սիլա:

Թեօլեօլեան Միհաս, Դար մը գրականութիւն: Գահիրէ 1955, 80, էջ 732: Գինն՝ 3 տորար:

Իսահակեան Աւետիք, Երկեր. Բանաստեղծութիւններ — Պոեմներ — Լեզուններ եւ Բալլադներ — Առակներ — Թարգմանութիւններ — Պատմուածքներ — Արձակ Պոեմներ — Լեզուններ եւ Չրոյցներ — Հեքիաթներ — Արձակ Առակներ — Իմ Յուշերից: Երեւան, Հայպետհրատ, 1955, 80, էջ 400: Գինն՝ 17 ու. 10 կ.:

Խաչիկեան Լ. Ս., ԺԵ. դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ: Մասն Առասպելներ և Կրօնական Պատմութեան Ինստիտուտ. Նիւթեր Հայ Ժողովրդի Պատմութեան. Գիրք վեցերորդ: Երեւան 1955, 80, էջ 42 + 818: Գինն՝ 29 ու. 60 կ.:

Համաստեղ, Քաջ Նազար եւ 13 Պատմուածքներ: Գահիրէ 1955, 80, էջ 376: Գինն՝ 70 Ե. Դ.:

Հայկ Վահէ, Հայերէնի Ծխան (Դ. հատոր): Նիւ Եորք 1954, 80, էջ 240: Գինն՝ 3 տորար:

Մանաս Էտկար, Դարդըս Լացէք: Իսթանպուլ 1947, 40, էջ 6:

— Սիրերգ: Իսթանպուլ 1949, 40, էջ 4:

Միսիքար արքայապետ, Աստուածածնի երգեր: Ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ղեւոնդ Վ. Տայեան: Վենետիկ 1954, 80 մեծ, էջ 32 + 16:

«Մշակոյթ» Հրատարակչական: Մշակոյթ. Գիրք գրականութեան եւ Արուեստի: Պէյրութ 955, 80, էջ 96: Գինն՝ 100 Լ. Դ.:

Մովսեան Միքայէլ Վրդ., Մարեմեան Ծագիկներ. Մարեմեան Ժողովներ: Պէյրութ 1955, 80, էջ 568:

Մովսեան Յակոբ, Հայ Լեզուն Քուրդ Երկրի մէջ եւ Փոխադարձարար: Պէյրութ 1950, 80, էջ 88: Գինն՝ 3 Լ. Ո.:

Յովհաննիսեան Աշոտ, Յրեկը-Պատմաբանական լոյս տակ: Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիա Պատմութեան Ինստիտուտ: Երեւան 1955, 80, էջ 122: Գինն՝ 2 ու. 90 կ.:

Յուշամատեն: Տ. Չարմայր Ծ. Վ. Կեղեւեանի: Իսթանպուլ 1948, 80, էջ Ը + 88:

Ներսիսեան Մ. Գ., Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարը Թրքական Բանաստեղծութեան դէմ. 1850—1870: Հայկական